

ԴԱՍՏ.—Տարակոյսչկայ թէ ատկէ արդար բան չէր կրնար ըլլալ. բայց ատ բանդ ալ առանց օրինաց հպատակելու չըլլար. մանաւանդ թէ ան աւտեն աւելի կապերու տակ կ'իյնան մարդիկ՝ քան թէ զատ զատ աշխատելով. վասն զի պէտք է որ ան բազմութեան մէջ մէկ գլխաւոր մըն ալ ըլլայ որ ամենուն աշխատանքը որոշէ ու զիրենք կառավարէ: Ինչէ զատ, որովհետեւ ծոյն ու աշխատասէրը, շուայն ու չափաւորը հաւասար բաժին առնելու կ'ըլլան, շատ աշխատողը քիչ կը վաստակի, քիչ աշխատողը շատ: Ինոր համար ինծի կ'երեւայ թէ լաւ է որ ամէն մարդ իր բաներուն ինքը խառնուի՝ որչափ որ կարելի է: Իսկ թէ ինչ ճար ընելու է որ ամէն մարդ առանց ուրիշի վնաս ընելու՝ իր իրաւունքը և ստացուածքը ձեռքէ չհանէ ու հարըստնայ, ուրիշ անգամ կը խօսինք:

ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Երբեք պարարտացնելու նոր նիւթ:

ՓԱՐԻԶՈՒ Պիտութեանց ճեմարանին մէջ յուլիսի 8^{էն} նոր գիւտ մը առաջարկուեցաւ՝ խիստ օգտակար անոնց որ երկիր ունին կամ կը բանեցընեն: Շաթէնման՝ անունով պարոնը փորձեր տեսեր է որ օշակով՝ բազադրուած ջուրը շատ աղէկ պարարտութիւն կուտայ արտերուն. ինքը իմացուցեր է ճեմարանին՝ թէ ան կը տոր տեղէն որ անցեալ տարի օշակաջրով ոռոգեր է եղեր՝ աս տարի կրկին առատութեամբ հնձեր է խոտը՝ քան թէ ուրիշ տեղերէն որ ան ջրով ոռոգուած չէն եղեր. և յոյս ունի որ երրորդ տարին ալ նոյն յաջողութիւնն ունենայ:

1 Chattenmann.

2 Գլ. Sel ammoniac. Յճ. Կիւրբը:

Շաթէնմանին խօսքին նայելով, չորս հարիւր քիլոկրամ հասարակ օշակը մէկ հեկտար երկրի մը իրեք տարի կը բաւէ. որ ըսել է՝ գրեթէ 312 օխան 149 ու կէս քառակուսի կանգուն գետնի: Եւ որովհետեւ այնչափ օշակին գինն է գրեթէ 240 Ֆլանք, տարեկան ծախքը 80 Ֆլանք, երբոր ենթադրենք թէ պարոն Շաթէնմանին ըսածին պէս՝ երկրին բերքը կրկին պիտի ըլլայ, հաւանական է թէ երկրագործը հարիւր քսան Ֆլանք աւելի վաստակ պիտի ընէ ամէն մէկ հեկտարի տեղին վրայ:

Սիլբոնի երկրագործութեան:

ԺԷ.

Նախորդի նման Բոյսերը ճշտելու վրայ:

Հ. Ինչ է ճակնդեղը.

Պ. Իսկայ խոշոր ու մսոտ արմատ ունեցող բոյսերէն է, որ չէ թէ միայն մարդկանց ու անասնոց ուտելիքի տեղ կը գործածուի, հապա նաև առատ շաքար ալ կը հանուի անկէ:

Հ. Ո՞ր հողերը աւելի կը յարմարին ճակնդեղի:

Պ. Ճակնդեղը կ'ուզէ թեթեւ ու աղէկ հերկած ու աղբոտած կակուղ հող. հիւսիսային կողմերը աւելի աղէկ առաջ կուգայ, բայց երկարատեւ չորութեան կը վնասուի:

Հ. Ճակնդեղը երբ կը ցանուի.

Պ. Իպրիլի սկիզբները կը ցանեն սովորաբար սփռելով. բայց աւելի աղէկ է կարգ կարգ ափսներու մէջ ցանելը. ափսները պէտք է որ մէկմէկէ 18^{էն} ինչուան 27 բթաչափ հեռու ըլլան: Եթէ մէկ ոտնաչափ մէկմէկէ հեռու թաղելու է իրեք չորս հունտ մէկ տեղ:

Հ. Ինչ հոգ ընելու է վրան.

Պ. Ընելու հոգը աս է որ ստէպ